



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-30-Ո-72
2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 173-րդ, 175-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 3-րդ բաժնի հոդվածների պահանջներով, ելնելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդին վերապահված լիազորությունների իրագործումն ապահովելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի խորհրդանիշի նկարագրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
 - 2) Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի խորհրդանիշի ձևերը՝ հայերեն և անգլերեն տարբերակներով՝ համաձայն հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. օգոստոսի 2
ք. Երևան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. օգոստոսի 2-ի թիվ ԲԴԽ-30-Ո-72
որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԽՈՐՀՐԴԱՆԻՉԻ

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի խորհրդանիշը շրջանաձև է, ինչը խորհրդանշում է հավերժություն և անսահմանություն:
2. Շրջանի կենտրոնում պատկերված է կշեռք, որը խորհրդանշում է արդարություն և անաչառություն:
3. Կշեռքի պատկերից վերև ընկած կենտրոնական հատվածում արձաթագույն տառերով կամարաձև գրված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի հապավումը՝ «ԲԴԽ»:
4. Շրջանի վերին հատվածի աջ և ձախ կողմերը եզերված են արձաթագույն հասկերով:
5. Կշեռքի պատկերից ներքև ընկած կենտրոնական հատվածում արձաթագույն տառերով երկու տողով մակագրված է «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ» և «ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ» բառերը:
6. Շրջանի ընդհանուր ետնամասը մուգ կապույտ է՝ պատված արևի շողերի առկայծումներով՝ ձախից դեպի աջ և ներքևից դեպի վերև ընկած ճառագայթների տեսքով, որը խորհրդանշում է ջերմություն, հոգատարություն, լուսավորություն և հավասարություն:
7. Խորհրդանիշի պատկերներն արձաթագույն երանգ ունեն:
8. Խորհրդանիշի անգլերեն տարբերակը նույնական է հայերեն տարբերակի հետ՝ բացառությամբ տառերի և բառերի, որոնց փոխարեն համապատասխանաբար գրված է «SJC», «SUPREME JUDICIAL» և «COUNCIL» բառերը:
9. Խորհրդանիշն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով և դեպքերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՁԵՎ

Ձև 1



Ձև 2

